



ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ն հրավիրում է համապատասխան և իրավասու կազմակերպություններին ներկայացնելու գնային առաջարկ՝ ներառյալ հարկերը, բենզինի և դիզելային վառելիքի մատակարարման՝ մեկ կամ մի քանի ստորև բերված լոտերի համար՝

- լոտ 1 - բենզին ռեզուլյար,**
- լոտ 2 - բենզին պրեմիում,**
- լոտ 3 - դիզելային վառելիք:**

Տեխնիկական և առևտրային պահանջներ՝

1. Մատակարարումը պետք է իրականացվի կտրոններով՝ ամսական պատվերների հիման վրա:
2. Գնային առաջարկը պետք է ներառի տեղեկություն բենզալցակայանների տեղակայման վերաբերյալ, որտեղ գործածական են կտրոնները:
3. Ընտրված մասնակցի կամ մասնակիցների հետ կկնքվի միավոր գնի շրջանակային համաձայնագիր՝ մեկ տարի տևողությամբ, հետագայում շարունակելու հնարավորությամբ:
4. Գները պետք է ամրագրված լինեն տվյալ պատվերի պահին շուկայական մանրածախ գների հետ համապատասխան տոկոսային կամ դրամական հստակ գեղչով:
5. Պետք է ներկայացնել որակի և համապատասխանության սերտեֆիկատներ:
6. Սույն գնմանը մասնակցելու իրավունք չունեն անձինք.
 - 1) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ դատական կարգով ճանաչվել են սնանկ,
 - 2) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեն ժամկետանց պարտքեր Հայաստանի Հանրապետության հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով,
 - 3) որոնց գործադիր մարմնի ներկայացուցիչը հայտը ներկայացնելու օրվան նախորդող երեք տարիների ընթացքում դատապարտված է եղել տնտեսական գործունեության կամ պետական ծառայության դեմ ուղղված հանցագործության համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված է,
 - 4) որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:Որպես պայմանագրի ստորագրման նախապայման պայմանագիր շնորհիվ ընկերությունը/ները պետք է ներկայացնեն հարկային մարմնի կողմից վավերացված տեղեկանք՝ հարկային և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ժամկետանց պարտքերի բացակայության վերաբերյալ:

Հետաքրքրված հայտատուները կարող են գնային առաջարկի ներկայացման ձևի վերաբերյալ տեղեկություններ ստանալ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ից, աշխատանքային օրերին, ժամը 09.00-13.00 և 14.00-18.00՝ ստորև նշված հասցեում՝

ՀՀ, ք. Ադոնցի 6, 0014, Վեոլիա Ջուր ՓԲԸ, 9-րդ հարկ, Գնումների վարչություն:

Հեռ.՝ (374 11) 30-01-86,

Էլ-փոստ՝ procurement@vjur.am

Գնային առաջարկները պետք է ներկայացվեն ստորագրված, կնքված և փակ ծրարով կամ էլեկտրոնային եղանակով վերը նշված էլ.փոստին, ոչ ուշ, քան 2018թ. հունվարի 16-ը, ժամը 15:00 վերը նշված հասցեով:

Ուշացած գնային առաջարկները կմերժվեն:

«Վեոլիա Ջուր» ՓԲԸ

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով Ձեր կողմից տրամադրված հրավերը Ընկերության անվանումը պատրաստ է պայմանագիրն իրականացնել հետևյալ միավոր գնով:

| | | Առաջարկվող միավոր գին* |
|---|-------------------|------------------------|
| 1 | բենզին ռեզուլյար | |
| 2 | բենզին պրեմիում | |
| 3 | դիզելային վառելիք | |

***Օճանոթություն:** Առաջարկվող միավոր գինը պետք է սահմանված լինի տվյալ պատվերի պահին շուկայական մանրածախ գների հետ համապատասխան տոկոսային կամ դրամական հստակ զեղչով:

Մենք հասկանում ենք, որ Դուք պարտավորված չեք ընդունել մեր առաջարկը կամ ցանկացած առաջարկ, որը ստանում եք:

Ստորագրություն` _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Մատակարարի անունը` _____

Հասցեն` _____

Հեռախոսահամարը _____

Էլ.փոստի հասցե _____